Արթուր Դավթյան

Երևան 2021թ.

Արթուր Դավթյան

(Կենսագրություն)

- 15.09.2016 թ. ՀՀ Ազգային ժողովի որոշմամբ նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազ
- 2016թ. հունիսի 22-ի ՀՀ նախագահի հրամանագրով Արթուր Դավթյանը նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
- 2013-2016թթ.- Երևան քաղաքի դատախազ
- 2012-2013թթ.- Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազ
- 2008-2012թթ.- ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ
- 2007-2008թթ.- ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազ
- 2006-2007թ.- ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազ
- 2000-2006թթ. – ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս
- Դասախոսում է «Հայաստանում Ֆրանսիական Համալսարանում», «Երևանի Պետական Մանկավարժական Համալսարանում»:

Արթուր Դավթյանը ՀՀ գլխավոր դատախազ է դարձել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի նախագահ Վազգեն Ռշտունու, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Վահագն Հարությունյանի և ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետ Գեորգի Կուտոյանի անմիջական միջնորդությամբ: Այդ պայմաններում, սակայն, չանդրադառնալով հարցի բարոյական կողմին, ՀՀ գլխավոր դատախազի անձին քաջատեղյակ դատախազներին ամենևին էլ զարմանալի չէ, որ, համենայն դեպս արտաքինից, Արթուր Դավթյանը փորձում է պատրանք ստեղծել, թե ինքը որևէ կաշկանդվածություն չունի, ավելին նույնիսկ իբրև այն գործով, որով Վահագն Հարությունյանը ներգրավված է որպես մեղադրյալ, քանզի այդքան բաղձալի աթոռը պահպանելու համար, ակնհայտ է, որ Արթուր Դավթյանը պատրաստ է շատ ավելիին:

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը 2016 թվականին զբաղացնելով ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնը, ի պաշտոնե լինելով պետական շահերի պաշտպան, ՀՀ գլխավոր դատախազությունը օգտագործել և ՀՀ գլխավոր դտաախազությունում զբաղեցրած իր պաշտոնը ծառայեցրել է իր անձնական շահերին:

Կոռուպցիոն ռիսկեր Գլխավոր Դատախազությունում

ՀՀ գլխավոր դատախազության համազգեստները

Ստորև փաստերով ներկայացնենք այն կոռուպցոն գործարքները որ տեղ են գտել դատախազությունում Արթուր Դավթյանի օրոք.
2014թ-ին դատախազության համազգեստների կարման համար հայտարարված տենդերը շահել է «Պահապան «ՍՊԸ-ն:
Միայն մեկ կոստյումի գինը «Պահապան» ՍՊԸ-ի արտադրության դեպքում կազմել է 53,000 ՀՀ դրամ ($ 108): Սույն ՍՊԸ-ն արտադրել է դատախազության համազգեստի ամբողջ լրակազմը /վերնաշապիկ, գոտի, անդրավարտիք և այլն:
2015թ-ին նույն տենդերը՝ ավելի բարձր գնով շահել է Քանաքեռ Զեյթուն համայնքում գտնվող Ազարյան ազգանունով անձին պատկանող կարի արտադրամասը:
Մեկ կոստյումի գինը 2014թ. կազմել է 53 000, իսկ 2015թ. փաստացի կազմել է 40 000 ($ 81.7) ավելին - 93.000 ՀՀ դրամ ($ 189.7):

Արթուր Դավթյանի նախաձեռնությամբ 2018 թվականին փոխվեց նաև ՀՀ դատախազների համազգեստը, երբ դրա անհրաժեշտությունը նույնպես, իսպառ, բացակայում էր, քանզի նախկին համազգեստը ոչնչով չէր զիջում նորին: Համազգեստը փոխելը նույնպես ՀՀ բյուջեի վրա մի քանի տասնյակ միլիոն ՀՀ դրամ գումար արժեցավ: Ի դեպ՝ նորից, 2018 թ-ի մայիսի 30-ին դատախազությունում անցկացված է համազգեստների կարման հերթական մրցույթը կրկին շահել է Քանաքեռ Զեյթուն համայնքում գտնվող Ազարյան ազգանունով անձին պատկանող կարի արտադրամասը: Ըստ օդում կախված լուրերի , համազգեստների տենդերի շահման և Քանաքեռի կարի արտադրամասի այդ տենդերները շահելու գործնթացում գործել և գործում է կայուն ատկատների սխեմա:

Այս առումով հետաքրքրքական է, որ ՀՀ դատախազության աշխատակազմի ղեկավար Համլետ Նավասարդյանը, որը հանդիսանում է նախկին դատախազ Գ.Կոստանյանի մտերմիկ անձը, որոշակի խոչընդոտ է հանդիսացել վերը նշված սխեմայում ,որի պատճառով էլ Արթուր Դավթյանը փորձել է ազատվել նրանից, սակայն վերջինս հրաժարվել է դիմում գրել: Արթուր Դավթյանի հրամանով Նավասարդյանին տեղակալ է նշանակվել Համլետ Գրիգորյանը, և այդ օրվանից սկսած բոլոր սխեմաները իրականացվում է Համլետ Գրիգորյանի միջոցով: Գործող աշխատակազմի ղեկավար Համլետ Նավասարդյանը փաստացի մեկուսացված է և նրան բացարձակ չեն թողնում, որ մասնակցի ինչ որ գործողության:

2018 թ-ի մայիսի 30-ին կայացած մրցույթից առաջ, նույն Համլետ Գրիգորյանը ճնշումներ է գործադրել այլ արտադրողների նկատմամբ, որպեսզի վերջիններս չմասնակցեն մրցույթին:

Տեղեկատվության իսկության ստուգման համար ընդամենը պետք է համեմատել ՀՀ ում գործող կարի արտադրամասի գները, այս պահին դատախազությանը համազգեստ մատակարարող Քանաքեռի՝ Ազարյանին պատկանող կարի ֆաբրիկայի գների հետ և կպարզվի, որ այսօր Դատախազությանը համազգեստ է մատակարարվում շուկայում գործող գներից կրկնակի թանկ և որակով նախկիններին զիջող համազգեստ:
Այս ամենի արդյունքում այսօր ՀՀ դատախազության աշխատակիցները կանգնած են ամենամյա դրամական խրախուսումից զրկվելու վտանգի առաջ, որպիսի հանգամանքը Արթուր Դավթյանը պատճառաբանում է բյուջեյում գումար չլինելու հանգամանքով:

ՀՀ գլխավոր դատախազությունում կատարվող շինարարական աշխատանքների մասին

Պակաս ուշագրավ չեն նաև Արթուր Դավթյանի պաշտոնավարման տարիներին ՀՀ գլխավոր դատախազությունում ծավալված շինարարական աշխատանքները, որոնց նախաձեռնողը հանդիսացել է հենց Արթուր Դավթյանը: Սեփական նախաձեռնությամբ Արթուր Դավթյանը՝ ՀՀ նախկին գլխավոր դատախազների կողմից տարիներ շարունակ օգտագործվող աշխատասենյակը փոխարինեց նորով, երբ դրա անհրաժեշտությունը, իսպառ բացակայում էր՝ նախկին աշխատասենյակի գերկահավորված լինելու և ոչնչով նոր աշխատասենյակին չզիջելու պատճառով:
Արթուր Դավթյանը, չցանկանալով օգտվել հասարակ մահկանացուների՝ ՀՀ դատախազության համակարգի ստորին օղակներում աշխատող դատախազների կողմից շահագործվող վերելակից, որից ի դեպ, տարիներ շարունակ օգտվել են նախկին ՀՀ գլխավոր դատախազները, միայն իր օգտագործման համար վերելակ պատվիրեց, որպեսզի իր ծառայողական ավտոմեքենայից իջնելով՝ անմիջապես այդ վերելակով կարողանա հասնել իր դղյակ-աշխատասենյակը: Բացառապես Արթուր Դավթյանի համար նախատեսված հիշյալ վերելակը մի քանի տասնյակ հազար դոլար գումար արժեցավ ՀՀ բյուջեի վրա:
Դատախազությունում կատարվող շինարարական աշխատանքները կասկածահարույց են եղել հանրության համար և ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը ՀՀ ազգային ժողովում ելույթ ունենալով աղավաղել է փաստերը, որոնք վերաբերվել են դատախազությում վերաբերվող շին աշխատանքներին: Այսպես.

1. ՀՀ գլխավոր դատախազը բարձր ամբիոնից ստելով, նշել է թե իր նոր աշխատասենյակը ավելի փոքր է, կազմում է 100 քմ, իսկ նախկին աշխատասենյակը եղել է 200 քմ: Սա չի համապատասխանում իրականությանը, քանի որ ներկայիս և նախկին աշխատասենյակներն ունեն խոհանոց, հանգստյան սենյակ, ընդունարան և լոգասենյակ, ի տարբերություն նախկինի նոր աշխատասենյակը ունի նաև բաց պատշգամբ: Նախկին աշխատասենյակին կից Գլխավոր դատախազը ունեցել է հյուրերի ընդունելիության ընթարձակ սենյակ, որը ևս Արթուր Դավթյանը առանձին մուտքով պահել է իրեն:
2. Վերելակի հարցով նույնպես Ազգային Ժողովի ամբիոնից իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն է տրամադրվել: Դատախազության շենքի այդ հարկում երկու վերելակ է գործում, որից օգտվում են դատախազները, սակայն Ա.Դավթյանը հարիր չհամարելով նույն վերելակից մյուս դատախազների հետ օգտվել, պետական միջոցներով կառուցել է նոր վերելակ որը սպասարկում է միայն իրեն: Դատախազը ստել է, որ այդ վերելակից միայն ինքը չի օգտվում, քանի որ տվյալ վերելակը դատախազության շենքի բակից ուղիղ բարձրանում է միայն իր աշխատասենյակ և բացի իրենից բնականաբար որևէ այլ դատախազ նշված վերելակից չի կարող օգտվել:

Արթուր Դավթյանի ավելի քան 250 մլն արժեցող առանձնատունը, որը նա թղթով կառուցել է 43 մլն դրամով



Արթուր Դավթյանի սեփական տան շինարարությունը նույնպես իրականացվել է դատախազության աշխատակիցների միջոցով, մասնավորապես նշվում է Արմավիրի Դատախազ՝ Վահե Սերգեյի Հովհաննիսյանի անունը, որը այդ պաշտոնը ստացել է Արթուր Դավթյանի տան հիմնապատերը իր միջոցներով կառուցելու դիմաց: Նույն տան շինարարությանը իրենց անձնական միջոցներով օժանդակած դատախազության այլ աշխատակիցներ նույնպես ստացել են առաջխաղացումներ դատախազության հանակարգում:
Այս դղյակը Արթուր Դավթյանի հավաստմամբ կառուցվել է 43 մլն դրամով: Եվ սա այն դեպքում, երբ նույն Աջափնյակ համայնքում նույնանման առանձնատների գները սկսվում են

500 հազար դոլարից և հասնում մինչև 1 մլն դոլար: Հետաքրքիր է, թե Դավթյանն այդ ինչ շինարարական տաղանդ ունի, որ կարողանում է առնվազն 500 հազար դոլար արժեցող տունը կառուցել 85 հազար դոլարով:

Նորից ըստ նույն աղբյուրի ՝ Արթուր Դավթյանի սեփական տան շինարարությունը նույնպես իրականացվել է դատախազության աշխատակիցների միջոցով, մասնավորապես նշվում է Արմավիրի Դատախազ՝ Վահե Սերգեյի Հովհաննիսյանի անունը, որը այդ պաշտոնը ստացել է Արթուր Դավթյանի տան հիմնապատերը իր միջոցներով կառուցելու դիմաց: Նույն տան շինարարությանը իրենց անձնական միջոցներով օժանդակած դատախազության այլ աշխատակիցներ նույնպես ստացել են առաջխաղացումներ դատախազության հանակարգում:

Արթուր Դավթյանի հետ փոխկապակցված անձիք և նրա գիտությամբ դատախազությունում գործող հանցավոր սխեման

Այսպես ՝

Արթուր Դավթյանը փաստացի փայատեր է իր սանիկներին ՝ Արտաշ Գևորգյանին և նրա հորը պատկանող՝ 3-րդ գյուղում գտնվող բազալտե սալիկների պատրաստման արտադրամասում:

Վերջիններս 2016 թ-ին պայմանագիր են կնքել Գավառի քաղաքապետարանի հետ, Գավառ քաղաքի հրապարակի, սալիկապատման աշխատանքները իրականացնելու համար և համայնքային բյուջեից ստացել են 5 000 000 ՀՀ դրամ, սակայն երկու տարի է ոչ մի գործողություն չեն իրականացրել: Երբ Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանը փորձել է վերջիններիցս կամ գումարը հետ ստանալ կամ պարտադրել աշխատանքները կատարել, գործին՝ Արթուր Դավթյանի ցուցումով խառնվել է Գավառի Դատախազը և ահաբեկելով քաղաքապետին ստիպել է պահանջներ չներկայացնել Արտաշ Գևորգյանին, պատճառաբանելով, որ նրա գործառույթներից տեղյակ է Գլխավոր Դատախազը և առկա է վերջինիս համաձայնությունը:

Գլխավոր դատախազի բարեկամական կապերը ՀՀ գլխավոր դատախազությունում

- «Գրագետ անձանցով»[1] Գլխավոր դատախազի շրջապատման մասին վկայում է Հրապարակ օրաթերթում 2019 սեպտեմբերի հրապարակված հոդվածը ուր նշվում է որ Գլխավոր դատախազի բարեկամ նրա նախկին օգնական Ա.Սուքիասյանը դիմել է որակավորման հանձնաժողովին խնդրելով թույլ տալ մասնակցելու դատախազների ցուցակի համալրման համար հայտարարված մրցույթին, որի դիմումը բավարարվել է: Նշված փաստը արտառոց չէր լինի եթե Ա.Սուքիասյան մի քանի տողերից բաղկացած դիմումը գրված չլիներ բազմաթիվ տառասխալներով, որի մասին վկայում է կայքում տեղադրված, գլխավոր դատախազության կնիքով

[1] https://acblog.am/%D5%A1%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D6%80-%D5%A4%D5%A1%D5%BE%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%B4%D5%BF%D5%A5%D6%80%D5%AB%D5%B4-%D6%85%D5%A3%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%AB-%D5%A1%D5%B6%D5%A3%D6%80/

վավերացված հիշյալ դիմումը, փաստացի գրագիտության նման մակարդակ ունեցող անձը ելնելով զուտ այս հանգամանքից, որ հանդիսանում է Գլխավոր դատախազի բարեկամը և նրա հովանավորչությամբ աշխատելու է որպես դատախազ և լուծելու է մարդկանց ճակատագիր

- Գլխավոր դատախազի հովանավորչությունը սրանով չի եզրափակվում նրա սանիկներից մեկը՝ վերջինիս կամակատարը, Արսեն Մարտիրոսյանը նշանակվել է ՀԿԳ քննության նկատմամբ հսկողության վարչության պետ և դա այն դեպքում երբ առկա է եղել տվյալ նշանակումն արգելող ՀՀ վարչական դատարանի որոշումը:

- ՀՀ գլխավոր դատախազի մյուս սանիկ Կարեն Գաբրիելյանը ազատվեց Ծիրակի մարզի դատախազի պաշտոնից եւ նոր պաշտոն ստացավ ՀՀ գլխավոր դատախազությունում :

- ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը աշխատանքից ազատման դիմում էր գրել եւ նրա փոխարեն ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ նշանակվեց Երեւան քաղաքի դատախազ Գեւորգ Բաղդասարյանը, որը «Մարտի 1»-ի գործով սահմանադրական կարգը տապալելու համար մեղադրվող Ռոբերտ Քոչարյանին մեղադրող դատախազներից մեկն է:

- Մեկ այլ դատախազ, որը հանդիսանում է Արթուր Դավթյանի մտերիմ ընկեր և բարեկամ Արարատի մարզի դատախազն է, որն ունի ընդամենը 2 տարվա աշխատանքային փորձ և նշանակվել է վարչության պետ:

- ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի մորքրոջ որդին, որը Գլխավոր դատախազի հովանավորչությամբ զբաղեցրել է սննդի պետական տեսչության պաշտոնը և ԱԱԾի կողմից կաշարք ստանալու համար ձերբակալվել է, սակայն դատարանի կողմից ազատ է արձակվել կալանքից, որը ևս վկայում է Արթուր Դավթյանի կողմից դատական իշխանության վրա ունեցած ազդեցության մասին:

- Անդրադառնալով նաև ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հայկ Ասլանյանի անձին՝ հարկ է նշել, որ նա նույնպես ՀՀ դատախազության համակարգում «հին կաշառակերի» համբավ է վայելում, ով անգամ Գևորգ Կոստանյանի պաշտոնավարման տարիներին «փող փախցնողի» տխրահռչակ համբավ է ունեցել, իսկ հետհեղափոխական օրերին ամեն կերպ փորձում էր զանազան ծառայություններ մատուցելով «Ծառուկյան» խմբակցության ղեկավար Գագիկ Ծառուկյանին՝ նրա միջոցով հավակնել ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնին: Ի դեպ, նա իր համեստ լուման է ներդրել Հոկտեմբերի 27-ի դեպքի կոծկման գործում: Ընդ որում, այդ դեպքը կոծկելու մեկ այլ առավել մեծ դերակատար շարունակում է բարձր պաշտոն զբաղեցնել ՀՀ դատախազության համակարգում: Խոսքը ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արմեն Հարությունյանի մասին է, ում ամենակարևոր հունարը շատ արագ նկատելով՝ պարոն Արթուր Դավթյանը նրան վստահեց ՀՀ դատախազության որակավորման հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Վերջինս, ըստ տարածված

լուրերի, կարողանում է հմտորեն ապահովել կաշառքի դիմաց նորաթուխ կադրերի ներհոսքը դատախազության համակարգ: Ի դեպ, Արմեն Հարությունյանը ջայլամի հոգեբանությամբ տարավ Արթուր Դավթյանի և նրա թիմակիցների ջանքերով Գևորգ Կոստանյանին գահընկեց անելու գործընթացը՝ անձնուրաց ծառայելու երդում տալով Արթուր Դավթյանին և շատ արագ մոռանալով, որ Գևորգ Կոստանյանի շնորհիվ էր ինքը նշանակվել գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում:
Ի մի բերելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ երկրում հաստատված սիրո և համերաշխության մթնոլորտը ամենևին չի վերաբերում ՀՀ դատախազությանը, ընդհակառակը, ՀՀ դատախազությունում հետհեղափոխական օրերից ձևավորված մթնոլորտը հիշեցնում է ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի՝ «Քաղաքական կնքահոր» Սերժ Սարգսյանի պատրանքային իշխանությունը:

- Ազատ Մարգարյանը, ով ըստ մամուլում տարածված ինֆորմացիայի 2013թ. հանդիսացել է Երևան քաղաքի դատախազության դատախազ, ստացել է ԱՄՆ մեկնելու թույլտվություն և առանց աշխատանքից ազատվելու մեկնել է ԱՄՆ շուրջ 4,5 տարի մինչև 2018թ. սեպտեմբերը մնացել է այնտեղ:
Ըստ շրջանառվող լուրերի՝ ԱՄՆ-ում անհասկանալի ճանապարհով բանկային քարտերով հափշտակել է շուրջ 500.000 ԱՄՆ դոլար եւ վերադարձել Հայաստան:

- ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության նախկին պետ Արմեն Նիկողոսյանը, ով կոռուպցիոն սխեմաներում մասնակցելու պատճառով հեռացված է եղել համակարգից Գլխավոր դատախազի մտերիմը, նրա հովանավորչությամբ նորից վերականգնվել է ՀՀ դատախազությունում արդեն որպես ՀՀ գլխավոր դատախազին առընթեր ավագ դատախազ:
Արմեն Նիկողոսյանը սփյուռքահայ Ռուբիկ Մանասյանից խլել է վերջինիս բիզնեսը, որը թուրքական դրոժի ներկրմամբ եւ իրացմամբ էր զբաղված: ՀՔԾ-ում նրա նկատմամբ հարուցված քրեական գործ կար, բայց Նիկողոսյան իր կապերի եւ պաշտոնական դիրքի շնորհիվ փորձել է կարճել հարուցված քրեական գործը: Նիկողոսյան իրականում դե յուրե ղեկավարում է գլխավոր դատախազությունը եւ ավելի քան Արթուր Դավթյանը ազդում որոշումների կայացման հարցում:
Նա հայտնի է իր ընտանեկան բիզնեսներով: Նրա տիկնոջն է պատկանում Մեդալգո ընկերությունը: 2015-2017 թվականների ենթակառուցվածների եւ գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագրի 147 միլոն դրամ հատկացվեց նրա ընկերությանը, այն պարագայում, որ ֆիրման չուներ շինարարական լիցենզիա, դա կատարվել է Արմեն Նիկողոսյանի դատախազական շրջանում: Մեդալգո ընկերությունն է, որ մինչ օրս զբաղվում է դրոժի ներկրմամբ չնայած այն բանի, որ սփյուռքահայ գործարարը որոշել է սպառել դատական բոլոր ատյանները:Նիկողոսյանը դատախազական դիրքի շնորհիվ խոչընդոտում է բոլոր տեղերում, նա հայտարարում էր, որ գլխավոր դատախազությունը դե յուրը ինքն է ղեկավարում:
Իր պաշտոնը ստանալու համար նա գլխավոր դատախազին ճոխ նվեր է տվել: Նա սերտ կապերի մեջ է եղել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախկին նախագահ Երվանդ Խունդկարյանի հետ, որը դատական հարցերում օգնում էր Նիկողոսյանին, ընդհուպ մինչեւ բարձրաստիճան անձանց էթիկայի հանձնաժողով ոչ իրական հայտարարագիր

ներկայացնելը: Թուրքական արտադրության անորակ դրոժը Նիկողոսյանը վաճառում է արդարադատության նախարարության գաղութների վարչությանը, եթե որեւէ մեկը փորձի մատակարարել նա անմիջապես դատախազական միջողցներով պատճամիջոցների է անցնում: Լինելով Արտաշատի բնակիչ՝ տղան ծառայում է Վեդիի զորամասում, սակայն փաստացի գտնվում է տանը:

- ՀՀ գլխավոր դատախազի կողից հովանավորչության ակնհայտ դրվագ է վերջինիս մտերիմներ Սարգիս և Ցոլակ Թարխանյանների գործունեությունը ՀՀ գլխավոր դատախազությունում, ինչպես նաև նրանց զբաղեցրած պաշտոնները: Մեր կազմակրպության հարցումներին ի պատասխան (ստորև ներկայացնում ենք) ՀՀ դատախազությունը պատասխանել է, որ .Սարգիս Թարխանյանը հանդիսանում Արթուր Դավթյանի վարորդը, ինչպես նաև համատեղության կարգով զբաղեցնում է ՀՀ դատախազության Անվտանգության վարչության պետի պաշտոնը, իսկ վերջինիս եղբայր Ցոլակ Թարխանյանը աշխատում է ՀՀ դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական բաժնում՝ որպես վարորդ, սակայն աշխատանքի չի հաճախում:
ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի սանիկ Սարգիս Թարխանյանի ավտոմեքենային պետհամարանիշի փոխարեն ամրակցված է 78 AM 001 հաշվառումից հանված համարանիշը: Եթե նշված համարանիշը հաշվառումից հանված չէ, ապա ո՞ւմ անունով է գրանցված այն եւ արդյոք իրականությո՞ւն է, որ Արթուր Դավթյանի բարեկամ Արթուր Բաղդասարյանի ավտոմեքենային ամրակցված է հաշվառումից հանված 353 LV 61 համարանիշը: Եթե նշված համարանիշն էլ հաշվառումից հանված չէ, ապա ո՞ւմ անունով է գրանցված այն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
էլ. փոստ info@prosecutor.am

N 6/21-14-19
«16» 10 2019թ.

«Վեյես» իրավապաշտպան
ՀԿ նախագահ Մ.Պողոսյանին

Հարգելի տիկին Պողոսյան,

Ի պատասխան 12.10.2019թ. ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված Ձեր հարցմանը տեղեկացնում եմ.

Սարգիս Թարխանյանը զբաղեցրել է հետևյալ հաստիքները.

13.11.2012-16.10.2013թթ.	ՀՀ դատախազության աշխատակազմի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության տարածքային բաժնի վարորդ-ցրիչ
16.10.2013-25.11.2014թթ.	ՀՀ դատախազության աշխատակազմի Երևան քաղաքի դատախազության տարածքային վարչության վարորդ
2015-2016թթ.	Ծառայել է ՀՀ ոստիկանությունում
03.11.2016-09.01.2017թթ.	ՀՀ զինվորական դատախազության տարածքային բաժնի առաջատար մասնագետ
09.01.2017թ.-ից մինչ օրս	ՀՀ դատախազության տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման և անվտանգության ապահովման վարչության պետ



Ցոլակ Թարխանյանը զբաղեցրել է հետևյալ հաստիքները.

25.11.2014-08.07.2016թթ.	ՀՀ դատախազության աշխատակազմի Երևան քաղաքի դատախազության տարածքային վարչության վարորդ
08.07.2016-24.10.2017թթ.	ՀՀ դատախազության աշխատակազմի գնումների և նյութատեխնիկական ապահովման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի վարորդ
24.10.2017թ.-ից մինչ օրս	ՀՀ դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի վարորդ

Հարգանքով՝

Անձնակազմի կառավարման բաժնի պետ Ս. Պարսամյան

Բոլոր հնչեղ հակակոռուպցիոն գործերը, որոնք քննվել են ՀՔԾ-ում և ըստ սցենարի չպետք է հասնեն իրենց տրամաբանական ավարտին հանձնարարվում են դատախազի կամակատար Արսեն Մարտիրոսյանին: Այսպես՝ ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանին եւ նրա ընկեր գործարար Բարսեղ Բեգլարյանին՝ Ֆլեշի Բարսեղին, մեղադրում է պետական բյուջեից մոտ կես միլիարդ դրամի հափշտակությունը կազմակերպելու համար: Այս գործով դատախազը Արսեն Մարտիրոսյանն է, որը բավականին մտերիմ կամ, այսպես ասած, սուրբ հարաբերությունների մեջ է գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի հետ: Նա դատախազի սանիկն է:
ՀՔԾ-ն արդեն դատարան է ուղարկել Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանի եւ նրա սանիկ Արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության նախկին պետ Նորայր Փանոսյանի մասով հարուցված քրեական գործը: Նրանք երկուսն էլ մեղադրվում են պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ: Այս գործով մեղադրողը դարձյալ դատախազը ևս ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի սանիկն է:
2019 թվականին սեպտեմբերի 25-ին «ՀՔԾ-ն «Մարտի 1»-ի գործով մեղադրանք առաջադրեց ՀՀ նախկին ոստիկանապետ Ալիկ Սարգսյանին՝ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, պաշտոնեական կեղծիքի եւ հանցագործությունը պարտակելու համար, ՀՀ գլխավոր նախկին դատախազ Գեւորգ Կոստանյանին, ինչպես նաեւ ոստիկանության այլ պաշտոնատար անձանց: Այս գործը հսկում է դատախազ Պետրոս Պետրոսյանը, որը նաեւ նշանակվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր ավագ դատախազ: Դատախազությունում տարածված լուրերի համաձայն՝ նա գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի սանիկն է:
Նույն Պետրոս Պետրոսյանը նաեւ ՀՀ երկրորդ նախագահ, «Մարտի 1»-ի գործով սահմանադրական կարգը տապալելու համար մեղադրվող Ռոբերտ Քոչարյանին, Յուրի Խաչատուրովին, Արմեն Գեւորգյանին, Սեյրան Օհանյանին մեղադրող դատախազն է: Նրա հետ դատարանում մեղադրող դատախազներն են նաեւ Երեւան քաղաքի դատախազ Գեւորգ Բաղդասարյանը եւ արդարադատության առաջին դասի խորհրդական, ՀՀ գլխավոր դատախազության հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Կարեն Բիշարյանը, որը եւս դատախազի սանիկներն են:

Ավետիս Ափիյան

Ավետիս Ափիյանը 2008 թվականից զբաղեցրել է Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի պաշտոնը: «Ավետիս Ափիյանն իրավաբանի ընտանիքի զավակ է: Նրա հայրը՝ Ներոն Ափիյանը, իրավագիտության ոլորտի միակ ակադեմիկոսն է եղել՝ «Էլիտա» միջազգային ակադեմիայի անդամ, որի աջակցությամբ իրենց իրավական ճառերն էին պատրաստում բազմաթիվ իրավաբաններ՝ ընդհուպ միջազգային ատյաններում:

Ավետիս Ափիյանին պաշտոնից ազատելու եւ նրա փոխարեն ինչ-որ մեկի անփորձ զավակին դատախազ դարձնելու պատմությունն սկսվել է 2018թ. փետրվարից, երբ նրա անունը, ՀՀ գլխավոր դատախազի 07.02.2018թ. թիվ 10-Ա հրամանի հավելվածի համաձայն, ներառվել է դատախազների արտահերթ ատեստավորման ցուցակում՝ չնայած այն հանգամանքին, որ ՀՀ

գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կողմից 2017թ. ապրիլի 12-ին անցկացված ՀՀ դատախազության աշխատակիցների ատեստավորման արդյունքներով որոշվել էր, որ Երեւան քաղաքի Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ Ավետիս Ներոնի Ափիյանը համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին՝ լրացուցիչ վերապատրաստում անցնելու պայմանով: Նշված հիման վրա Ափիյանը բարեհաջող անցել էր նաեւ վերապատրաստումը:

Արտահերթ ատեստավորումը, որը նշանակվել է 2018թ. ապրիլի 13-ին, 17.11.2017թ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված եւ 09.04.2018թ. ուժի մեջ մտած «Դատախազության մասին» ՀՕ-198-Ն ՀՀ օրենքի պահանջներով սահմանված, չի կայացել: Նոր ատեստավորում անցկացնելու հնարը, սակայն, գտնվել է: ՀՀ գլխավոր դատախազի 27.04.2018թ. թիվ 45 հրամանով սահմանվել է ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի գործունեության նոր կարգը, որով ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ գլխավոր դատախազի 31.05.2007թ. թիվ 24 հրամանը: Դա հանձնաժողովին «հիմք» է տվել Ավետիս Ափիյանի համար նոր ատեստավորման օր նշանակել 2018թ. մայիսի 10-ը, ինչի մասին նրան տեղեկացրել են հեռախոսով, երբ վերջինս ստացիոնար բուժումներ էր ստանում տարբեր բժշկական կենտրոններում (2018թ. մայիսի 4-22-ը) եւ գտնվում էր ժամանակավոր անաշխատունակ վիճակում: Մայիսի 22-ից մեկ-երկու օր առաջ Ավետիս Ափիյանին դարձյալ հեռախոսով տեղեկացրել են, որ նրա արտահերթ ատեստավորումը նշանակվել է նույն թվականի հունիսի 6-ին, որին պետք է պարտադիր ներկայանալ:

ՀՀ գլխավոր դատախազի 22.06.2018թ. թիվ 124-Ա հրամանով Ավետիս Ափիյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Տեղի ունեցածն իր հանդեպ կատարված ապօրինություն համարելով՝ նա դիմել է դատարան՝ ՀՀ գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի 06.06.2018թ. թիվ 2 որոշումը եւ ՀՀ գլխավոր դատախազի 22.06.2018թ. թիվ 124-Ա հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնվելու եւ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար հաշվարկված միջին աշխատավարձը բռնագանձելու պահանջ-հայցով: Հայցն ամբողջությամբ բավարարվել է ՀՀ վարչական դատարանի ՎԴ/ 8328/05/18/ 13.03.2019թ. վճռով:

ՀՀ բնապահպանության նախկին նախարար Արամ Հարությունյան (Բուլկի Արամ)

Բնապահպանության նախկին նախարար Արամ Հարությունյանը որպես մեղադրյալ է ներգրավվել առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու և փողերի լվացման համար: «Առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու դեպքի առթիվ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա Արամ Հարությունյանը որպես մեղադրյալ է ներգրավվել ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ նա, հանդիսանալով ՀՀ գործադիր իշխանության ղեկավար աշխատող, իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող անձանց օժանդակությամբ առանձնապես խոշոր չափերով կաշառք է ստացել, ապա՝ օրինականացրել հանցավոր ճանապարհով ստացված առանձնապես խոշոր չափերով գույքը:

Ըստ մեղադրանքի՝ Արամ Հարությունյանը, 2007թ. հունիսի 8-ից զբաղեցնելով ՀՀ բնապահպանության նախարարի պաշտոնը, միաժամանակ հանդիսանալով ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոներ պարունակող ընդերքի տեղամասերի նկատմամբ հանքային իրավունքի ձևավորման միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի նախագահ, գործարար Սիլվա Համբարձումյանին հանքերևակումների ուսումնասիրության 10 հատուկ լիցենզիաներ տրամադրելու գործընթացն իրականացնելու, հետագայում ուսումնասիրության ժամկետները երկարացնելու և հանքերի շահագործման թույլտվություն ստանալու հարցը նրա օգտին լուծելուն նպաստելու համար գործարարից պահանջել և ստացել է առանձնապես խոշոր չափերով՝ 4.2 մլրդ ՀՀ դրամին համարժեք 14 մլն ԱՄՆ դոլար կաշառք:

Արդյունքում՝ 2008թ. հունվար-նոյեմբեր ամիսների ընթացքում, Սյունիքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերի տարբեր բնակավայրերում գտնվող հանքերևակումների ուսումնասիրության 10 հատուկ լիցենզիաներն անցել են Ս. Հ.-ին պատկանող ընկերությունների տրամադրության տակ: Նույն ժամանակահատվածում Ս. Հ.-ն բանկային իր հաշվեհամարներից կանխիկացրել և Արամ Հարությունյանի մտերիմի միջոցով նրան է տվել 6 մլն ԱՄՆ դոլար կաշառքի գումարը:

Պահանջված կաշառքի գումարի մյուս մասը՝ 8 մլն ԱՄՆ դոլար գումարը, Արամ Հարությունյանն իր մտերիմների օժանդակությամբ ստացել է Արաբական Միացյալ Էմիրություններում բացված տարբեր հաշվեհամարներին փոխանցումներ կատարելու եղանակով, այնուհետև գումարի ծագման իրական աղբյուրը քողարկելու և դրանց օրինական տեսք հաղորդելու նպատակով Արամ Հարությունյանը հանցավոր ճանապարհով ստացված գումարները փոխանցել է միջազգային ընկերության՝ Շվեյցարիայի Համադաշնությունում գտնվող բանկային հաշվեհամարին, ապա կազմակերպել հիշյալ հաշվեհամարից գումարների պարբերաբար փոխանցումն իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող անձին պատկանող և ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ընկերության հաշվեհամարին:

Արամ Հարությունյանը վերաբերյալ հարուցված քրեական գործով թույլ են տրվել մի շարք ապօրինություններ, այդ թվում Արաքս Դիլանյանի նկատմամբ գործողությունները կատարվել են կանխամտածված նշված գործի օբյեկտիվ քննությունը ձախողելու նպատակով: Տվյալ քրեական գործի վարույթն կարճելուն նախորդել է հանդիպում Երևան քաղաքի Մաշտոցի պողոտայի «Սիգար» բառում դատախազության բարձրաստիճան պաշտոնյաների և այլ անձանց միջև, որի ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն Արամ Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդումը ապօրինի դադարացնելու մասին: Հարկ է նշել, որ ՀՀ գլխավոր դատախազը, 2018թ. դեկտեմբերին դիմել է Ազգային Ժողով՝ պատգամավոր Արամ Հարությունյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, ինչպես նաև նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու թույլտվություն ստանալու համար, սակայն քվորում չլինելու պատճառով նիստեր տեղի չեն ունեցել: Արամ Հարությունյանի նկատմամբ 17.01.2019թ. հայտարարվել է հետախուզում:

Երևան Հիմնադրամ

Երևան հիմնադրամի[2] վերաբերյալ աղմկահարույց քրեական գործը ևս չհասավ իր տրամաբանական իրավական ավարտին և մեծաքանակ լուրերը առ այն, որ սույն հիմնադրամի կողմից Արթուր Դավթյանի մտերիմների հիմնած բարեգործական հիմնադրամին գումարներ է փոխանցվել մնացին օդում կախված:

Մարտի 1, 2008թ.

Հիշարժան է նաև Մարտի 1-ի գործով մեղադրյալ Ռոբերտ Քոչարյանի կալանավորման օրերին Արթուր Դավթյանի և նրա տեղակալ Հայկ Ասլանյանի դրսևորած վարքագիծը:
Այսպես.
Թե Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանում, թե ՀՀ վերաքննիչ քրեական դատարանում և թե ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդության քննարկման օրերին ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը և նրա տեղակալ Հայկ Ասլանյանը ՀՀ-ում չեն գտնվել: Սա բնականաբար զուգադիպություն չէ, քանզի այդ ժամանակահատվածում, թե ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը և թե ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հայկ Ասլանյանը, դեռևս չէին կողմնորոշվել, թե կոնկրետ որ քաղաքական ուժին կամ դրա առաջնորդին էին իրենք ծառայելու ներքաղաքական զարգացումների արդյունքում, այլ կերպ ասած՝ տվայտանքների մեջ էին:
Մարտի 1-ի քրեական գործը ակնհայտ պայմանավորված բեմականացում էր ՀՀ Գլխավոր դատախազի կողմից: Ապացույց է հանդիսանում այն փաստը, որ Արթուր Դավթյանը 2016թ. աշխատել է ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնում, մարտի 1-ի քրեական գործը կասեցված չի եղել, սակայն 2008թ. մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ քննվող քրեական գործին չի կցվել ՀՀ Պաշտպանության նախարարության «0038» հրամանը և չի կատարվել քննություն:

Արթուր Սարգսյան՝ Հաց բերող

Արթուր Սարգսյանի վերաբերյալ քննվող քրեական գործով հենց Արթուր Դավթյանի ուղղորդմամբ է նշանակվել կրկնակի համալիր դատաբժշկական փորձաքննություն, որի կեղծ արդյունքն էլ հիմք է հանդիսացել Արթուր Սարգսյանին մահվան հասցնելու համար:

«Կասկադ»-ի հողերը

ՀՀ դատախազության պաշտոնատար անձանց անօրինական գործողությունների վառ ապացույց է նաև «Կասկադ»-ի հողերի ապօրինի օտարման և դրանց հիման վրա հանցավոր ծագում ունեցող մեծածավալ հանցավոր ծագում ունեցող փողերի լվածման սխեմաները կոծկելը: Դեռ 2015թ-2016թթ. «Վելես» ՀԿ -ի կողմից Ա.Դավթյանին ներկայացվել է «ՎՏԲ -Հայաստան Բանկ» ռուս-ադրբեջանական բանկի կողմից բանկային փաստաթղթեր, որից ակնհայտ է եղել, որ 3 -օրվա ընթացքքում մոտ 800 000 ԱՄՆ դոլար

[2] https://www.azatutyun.am/a/29290271.html

է դուրս բերվել բանկից ՀՀ դատախազության բարձաստիճան աշխատակիցների անմիջական մասնակցությամբ: Մեկ այլ դրվագով վերաբերվող Կասկադի հողերին, Արթուր Դավթյանին ներկայացվել է 1մլն ԱՄՆ դոլարի դրամական շարժ օֆշորային կազմակերպություններից Հայաստան, որը կանխիկացվել է ՀՀ նախկին դատախազ Սուրեն Օսիպյանի որդու՝ Վիկտոր Հովսեփյանի կողմից և նրա մոր Լյուբով Փիլոյանի կողմից, որը Գլխավոր դատախազի կողմից հետագայում օգտագործվել է իր անձնական շահադիտական նպատակներով: 2015թ. «Վելես» իրավապաշտպան ՀԿ կողմից տրված հաղորդման հիման վրա հարուցվել է թիվ 13811015 քրեական գործը 178 հոդվածի 3 րդ մասի 1-ին կետով, որը հետագայում վերավորակավորվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 6 -րդ մասով, որը կարճվել է, ավելին տեսնելով, որ չի կարող լռեցնել հաղորդում ներկայացրած անձի՝ իրավապաշտպան Մ.Պողոսյանին, Արթուր Դավթյանը հանցավոր համաձայնության է եկել այդ ժամանակ Կենտրոնի դատարանի ղեկավար Ռուբեն Վարդազարյանի հետ և ձեռնամուխ են եղել ապօրինի քրեական հետապնդման իրավապաշտպանին լռեցնելու նպատակով:

Ստորև ներկայացնում ենք դատախազության աշխատակիցների կողմից կրիմինալ ծագում ունեցող ռուսական մեծաքանակ փողերի լվացման փաստը հավաստող բանկային անդորրագրերը:

FROM: VICTORIA PROJECTS LTD
TO: RUSSOBANK
DATE: 061127
:100 CUSTOMER TRANSFER
PLEASE PAY
:15 TEST KEY:
:20 SENDERS REF: 06112701
:21 RELATED REF: NONREF
:30 VALUE DATE: 061127
:32 AMOUNT: USD #258322,30#
:50 ORIGINATOR: VICTORIA PROJECTS LTD
PSS SUITE, 27 OLD GLOUCESTER STREET, LONDON, WC1N
3XX, UK
:52 ORIGINATOR BANK:/ 40807840900001510800
RUSSOBANK
10, PLYUSCHIKHA
MOSCOW
:53 REIMBURSEMENT:/
:56 INTERMEDIARY BANK:/ DRESDNER BANK
SWIFT:DRESDEFF
GERMANY
FRANKFURT
:57 PAY THRU:/ 499-08 122 507 00 400
VTB BANK (ARMENIA) CJSC FORMERLY ARMSAVINGSBANK
SWIFT:ARMJ AM 22
YEREVAN
ARMENIA
:59 BENEFICIARY:/ 160483292316
RAFAEL LTD
YEREVAN ARMENIA
:70 BENEF INFO: FOR COMPUTER GOODS MONITORS INV 27 DD 27/11/06
:71 CHARGES TO: OUR
:73 RECEIVER INFO:

FROM: GREENSBERG LTD
TO: CB RUSSLAVBANK (CJSC)
DATE: 061128
:100 CUSTOMER TRANSFER
PLEASE PAY
:15 TEST KEY:
:20 SENDERS REF: 06112801
:21 RELATED REF: NONREF
:30 VALUE DATE: 061128
:32 AMOUNT: USD #200577,70#
:50 ORIGINATOR: GREENSBERG LTD
45 BOROHOV ST., TEL-AVIV, ISRAEL
:52 ORIGINATOR BANK:/ 40807840600000001775
CB RUSSLAVBANK (CJSC)
119049 Moscow 14/2 Donskaya Str
:53 REIMBURSEMENT:/
:56 INTERMEDIARY BANK:/ DRESDNER BANK
SWIFT:DRESDEFF
GERMANY
FRANKFURT
:57 PAY THRU:/ 499-08 122 507 00 400
VTB BANK (ARMENIA) CJSC FORMERLY ARMSAVINGSBANK
SWIFT:ARMJ AM 22
YEREVAN
ARMENIA
:59 BENEFICIARY:/ 160483292316
RAFAEL LTD
YEREVAN ARMENIA
:70 BENEF INFO: FOR COMPUTER GOODS MONITORS INV 27 DD
27/11/06
:71 CHARGES TO: OUR
:73 RECEIVER INFO:

FROM: PITSFORD BUSINESS LTD
TO: CB RUSSLAVBANK (CJSC)
DATE: 061129
:100 CUSTOMER TRANSFER
PLEASE PAY
:15 TEST KEY:
:20 SENDERS REF: 06112901
:21 RELATED REF: NONREF
:30 VALUE DATE: 061129
:32 AMOUNT: USD #166100,00#
:50 ORIGINATOR: PITSFORD BUSINESS LTD
5 JUPITER HOUSE, CALLEVA PARK, READING, BERKS, RG7
8NN, GREAT BRITAIN (UK)
:52 ORIGINATOR BANK:/ 40807840600000001773
CB RUSSLAVBANK (CJSC)
119049 Moscow 14/2 Donskaya Str
:53 REIMBURSEMENT:/
:56 INTERMEDIARY BANK:/ DRESDNER BANK
SWIFT:DRESDEFF
GERMANY
FRANKFURT
:57 PAY THRU:/ 499-08 122 507 00 400
VTB BANK (ARMENIA) CJSC FORMERLY ARMSAVINGSBANK
SWIFT:ARMJ AM 22
YEREVAN
ARMENIA
:59 BENEFICIARY:/ 160483292316
RAFAEL LTD
YEREVAN ARMENIA
:70 BENEF INFO: FOR COMPUTER GOODS MONITORS INV 27 DD 27/11/06
:71 CHARGES TO: OUR
:73 RECEIVER INFO:

FROM: WATTS INTERNATIONAL LIMITED
TO: FEDERAL BANK OF THE MIDDLE EAST

DATE: 060809
:100 CUSTOMER TRANSFER
PLEASE PAY
:15 TEST KEY:
:20 SENDERS REF: 06080900
:21 RELATED REF: NONREF
:30 VALUE DATE: 060809
:32 AMOUNT: USD #270000,00#
:50 ORIGINATOR: WATTS INTERNATIONAL LIMITED
FLAT 12, 7 MANSION PLACE, LONDON, SW 7 5LT
UK
:52 ORIGINATOR BANK:/ CY84115010020734 19USDCACC001
FEDERAL BANK OF THE MIDDLE EAST
90, ARCH. MAKARIOS III AVENUE
NICOSIA, CYPRUS
:53 REIMBURSEMENT:/ 04-053-863
DEUTCHE BANK TRUST COMPANY AMERICAS
NEW YORK
:56 INTERMEDIARY BANK:/ CITI BANK
SWIFT:CITIUS33
USA
NEW YORK
:57 PAY THRU:/ .
ARMENIAN DEVELOPMENT BANK
SWIFT:ARDEAM22
ARMENIA
YEREVAN
:59 BENEFICIARY:/ 1810001316963317
PILOYAN LUBOV

MUSKOVAN STREET 8-34, YEREVAN, ARMENIA
:70 BENEF INFO: AGREEMENT 02.08.06
:71 CHARGES TO: OUR
:73 RECEIVER INFO:



Sobinbank
123022 Moscow, Russia
Building 56:15, Rochdelskaya street

Original Payment Order
Оригинал Платежного Поручения

Date/Дата: 080826 Our ref./Наш референс: S080826103D120

Mail to/Направлено в:
JSB SOBINBANK
BOOK KEEPING DEPARTMENT

Value Date, Currency Code, Amount/
Дата валютирования, код валюты, сумма:
080826 USD 450,000.00

Payment effected via/Платеж по: SWIFT

Ordering Customer/Клиент-перевододатель:
BANKOVSKIE SCHETA FIZICHESKIH LITS OAO 'SO

Account with Institution/Счет в банке:
PNCBAM22
PROCREDIT BANK
BUILDING 99, 21, MOSKOVYAN STREET
YEREVAN, ARMENIA

Beneficiary/Получатель:
Account: 25300002297500091
TER-HOVSEPYAN VIKTOR

IMPORTANT NOTICE

Items are credited upon receipt and are subject to final payment. All statements and advices sent by us must be examined by you with reasonable care and promptness. Any discrepancy must be reported in writing with a full description of the transaction including our reference number. This information should be sent within 30 days to the address indicated in caption.

Все суммы кредитуются на счет только при их поступлении.
Выписки и кредитовые авизо, высланные Вам, должны быть проверены Вами в разумно короткое время.
О любых расхождениях должно быть заявлено в письменной форме с указанием полных деталей платежа и нашего референса. Эта информация должна быть направлена нам в течение 30 дней по адресу, указанному выше.

Details of Payment/Детали платежа:
(VO99090)PAYMENT FOR THE CONTRACT OF CONCESSION OF THE RIGHTS OF THE REQUIREMENT AND DEBT TRANSFER FOR CONTRACTS 'BUILDINGS AND ALIENATIONS THE

*Please mention our reference number in any correspondence/Пожалуйста указывайте наш референс в любой переписке

Best regards/С наилучшими пожеланиями,
Sobinbank,Moscow

ОАО "Собинбанк"
БИК 044525487 К/С 30101810400000000487
ПРОВЕДЕНО
26 августа 2008 г.
Техн. опер. ОДПО УПО N 34
Медведева Е.Г. N 13

№ S080826103D120

Banking transaction:
Account Debit/Счет Дебет
40817840600000010000

Банковская операция:
Account Credit/Счет Кредит
30114840300000170001

BANKOVSKIE SCHETA FIZICHESKIH LITS

Currency Amount 450,000.00 USD Rate 24.4389 Сумма рублей 10,997,505.00

"КОПИЯ ВЕРНА"
ВЕДУЩИЙ ЮРИСКОНСУЛЬТ
ЛИБМАН Е.Ю.
27 АВГ 2015



Sobinbank
123022 Moscow, Russia
Building 56:15, Rochdelskaya street

Original Payment Order
Оригинал Платежного Поручения

Date/Дата: 080826 Our ref./Наш референс: S080826103D115

Mail to/Направлено в:
JSB SOBINBANK
BOOK KEEPING DEPARTMENT

Value Date, Currency Code, Amount/
Дата валютирования, код валюты, сумма:
080826 USD 900,000.00

Payment effected via/Платеж по: SWIFT

Ordering Customer/Клиент-перевододатель:
BANKOVSKIE SCHETA FIZICHESKIH LITS OAO 'SO

Account with Institution/Счет в банке:
ARMJAM22
VTB BANK (ARMENIA) CJSC
46, NALBANDYAN YEREVAN, ARMENIA

Beneficiary/Получатель:
Account: 160620004301
ANSUR INVEST

IMPORTANT NOTICE

Items are credited upon receipt and are subject to final payment. All statements and advices sent by us must be examined by you with reasonable care and promptness. Any discrepancy must be reported in writing with a full description of the transaction including our reference number. This information should be sent within 30 days to the address indicated in caption.

Все суммы кредитуются на счет только при их поступлении.
Выписки и кредитовые авизо, высланные Вам, должны быть проверены Вами в разумно короткое время.
О любых расхождениях должно быть заявлено в письменной форме с указанием полных деталей платежа и нашего референса. Эта информация должна быть направлена нам в течение 30 дней по адресу, указанному выше.

Details of Payment/Детали платежа:
(VO99090)PAYMENT FOR THE CONTRACT OF CONCESSION OF THE RIGHTS OF THE REQUIREMENT AND DEBT TRANSFER FOR CONTRACTS 'BUILDINGS AND ALIENATIONS THE

*Please mention our reference number in any correspondence/Пожалуйста указывайте наш референс в любой переписке

Best regards/С наилучшими пожеланиями,
Sobinbank,Moscow

ОАО "Собинбанк"
БИК 044525487 К/С 30101810400000000487
ПРОВЕДЕНО
26 августа 2008 г.
Техн. опер. ОДПО УПО N 34
Медведева Е.Г. N 13

№ S080826103D115

Banking transaction:
Account Debit/Счет Дебет
40817840600000010000

Банковская операция:
Account Credit/Счет Кредит
30114840300000170001

BANKOVSKIE SCHETA FIZICHESKIH LITS

Currency Amount 900,000.00 USD Rate 24.4389 Сумма рублей 21,995,010.00

"КОПИЯ ВЕРНА"
ВЕДУЩИЙ ЮРИСКОНСУЛЬТ
ЛИБМАН Е.Ю.
27 АВГ 2015

ՀՀ քաղաքացիական ավիացիայի վարչության նախկին պետ Հովհաննես Երիցյանի

Գլխավոր դատախազ Ա.Դավթյանի կոծկած գործերից է ՀՀ քաղաքացիական ավիացիայի վարչության նախկին պետ Հովհաննես Երիցյանի վերաբերյալ հարուցված մի քանի քրեական գործերը, որոնք Արթուր Դավթյանի հրահանգով 2014 թվականից սկսված շրջապտույտի մեջ են, շարունակաբար կարճվում են, հետագայում դատարանների որոշմամբ քրեական գործերի կարճման որոշումները վերացվում են, սակայն քննությունը տեղից չի շարժվում և դա այն պարագայում երբ ակնհայտ փաստաթղթավորված է Հովհաննես Երիցյանի կողմից շուրջ 5 մլն դոլարի փողերի լվացման և վաշխառման փաստը այլ բարձաստիճան պաշտոնյաների ներգրավմամբ: Արթուր Դավթյանին ներկայացվել է մանրակրկիտ փաստաթղթեր Հովհաննես Երիցյանի կողմից անհայտ ծագում ունեցող միլիոնավոր դոլարների շրջանառության փաստը, սակայն Արթուր Դավթյանը զբաղացնելով Երևան քաղաքի դատախազի պաշտոնը այն պահին դեռ Երևան քաղաքի դատախազության քննիչ Վ.Ջանազյանի մասնակցությամբ «Նորաշեն -2007» ՍՊԸ-ի գործից սկսած տարիներ ի վեր հովանավորել է Հովհաննես Երիցյանին և ջանք ու եռանդ չի խնայել վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու համար: / ի դեպ տվյալ պահից սկսած Ա.Դավթյանը հովանավորում է Վ.Ջանազյանին, առայսօր ապահովելով վերջինիս պաշտոնական վերելքը/ Տվյալ դրվագով տեսնելով, որ իրավապաշտպան Մ.Պողոսյանը չի համակերպվում Հովհաննես Երիցյանի վերաբերյալ հարուցված գործերի կարճման հետ և շարունակաբար բարձրաձայնում է, Արթուր Դավթյանի հրահանգով 2015

մայիս ամսին հարուցվել է մեկ այլ քրեական գործ Մ.Պողոսյանին ճնշելու և լռեցնելու նպատակով, որը ամիսներ ձգձգվելուց հետո կարճվել է:

ՀՀ Գլխավոր դատախազի մտերիմ կապերը քրեական հեղինակությունների հետ

ՀՀ Գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը մտերիմ կապեր ունի նաև քրեական հեղինակությունների հետ, որի վառ ապացույցն է Գյումրիի բնակիչների կողմից բազմաթիվ բողոքներ ու հաղորդումները ուղված դատախազ Արթուր Դավթյանին վերաբերվող ոմն Մելադա Սարգսյանի, որը քրեական հեղինակություն Անդրանիկ Սողոյանի հետ /Զապ/ մականունով վաշխառում է միլիոնավոր քանակի դոլարներ և հարստահարում և վախի մթնոլորտում պահում Գյումրիի բնակչության մի ստվար բնակչության, բնականաբար Արթուր Դավթյանի կողմից նույնպես հրահանգավորվել է քրեական հեղինակության վերաբերյալ քրեական գործ չհարուցելը:

ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նախկին պետ Միհրան Պողոսյան

2019թ. Հանրապետական կուսակցության նախկին պատգամավոր, Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նախկին ղեկավար Միհրան Պողոսյանին մեղադրանք է առաջադրվել Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 308-րդ հոդվածի 2-րդ մասով՝ հանրորեն վտանգավոր այն արարքների կատարման համար, որ նա, օգտագործելով պաշտոնեական դիրքը, վատնման եղանակով առանձնապես խոշոր չափերով գույք է հափշտակել և չարաշահել իր պաշտոնեական լիազորությունները, ինչն առաջացրել է ծանր հետևանքներ:
ՀՀ դատախազությունը ի դեմս ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի տեղյակ է եղել Միհրան Պողոսյանի գումարային շարժի մասին, քանի որ դեռ 2018 թվականին համապատասխան փաստաթուղթ է ստացվել Շվեցարիայից, որը սակայն տևական ժամանակ քննության առարկա չի դարձել դատախազի հրահանգով:

Անդրեաս Ղուկասյան

2016թ. Անդրիաս Ղուկասյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին մասով, 34-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 34-218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 34-235-րդ հոդվածի 3-րդ մասով: / զանգվածային անկարգություններ կազմակերպելու, կազմակերպված խմբի կողմից շենքեր, շինություններ, տրանսպորտի, հաղորդակցության կամ կապի միջոցներ զավթելու փորձը, պատանդ վերցնելու փորձը, ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու փորձը/ Վերջինիս նկատմամբ քրեական գործի հարուցման պատճառը եղել է հոգեկան հիվանդություններով տառապող և հաշմվանդամության մեջ գտնող վկաների ուղորդված ցուցմունքների վրա:

Դիվանագիտական անձնագրեր

2018թ. հոկտեմբերի 01-ին «Վելես» ՀԿ-ն հանցագործության մասին հաղորդում էր ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին առ այն, որ ՀՀ ԱԳՆ դիվանագիտական անձնագրեր էր տրամադրել 254 անձի, որոնք ըստ օրենքով սահմանված կարգի չէին կարող ունենալ դիվանագիտական անձնագրեր: Դիվանագիտական անձնագրեր էին տրամադրվել Առաքել Մովսիսյանին (Ծմայս), Վաչագան Ղազարյանին (Սերժի Վաչո), Սուրիկ Խաչատրյանին (Լիսկա), Հովիկ Աբրահամյանին (Մուկ), Գագիկ Խաչատրյանին, Քոչարյանի ամբողջ ընտանիքին և այլոց: ՀՀ գլխավոր դատախազությունը օրինաչափ էր համարել նման գործառույթը և անգործություն ցուցաբերելով փորձել էր կոծկել ՀՀ ԱԳՆ –ի կողմից կատարված վերոնշյալ ապօրինությունները:

ՀՀ գլխավոր դատախազությունը մերժել է սույն հաղորդումը և օրինաչափ համարել անգամ քրեական հեղինակությանը դիվանագիտական անձնագիր տրամադրելը / դեռ 2017-ին Չեխիայում ձերբակալվել էին քրեական հեղինակություններ, նրանց մեջ էր նաև «Ռոբսոն» մականունով[3] գործարար Ռուբեն Թաթուլյանը: Չեխիայի ոստիկանությունը նշել էր, որ նա նաև դիվանագիտական անձնագիր ունի, Հայաստանի արտգործնախարարությունը հաստատել էր/, որը ևս մեկ անգամ ապացուցում է ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը կապը քրեական աշխարհի ներկայացուցիչների հետ և նրա հովանավորչությունը վերջիններիս:

[3] ԱՄՆ-ը պատժամիջոցներ է սահմանել ռուսաստանցի «օրենքով գողերի», այդ թվում՝ հայազգի Ռուբեն Թաթուլյանի դեմ (azatutyun.am)